ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՆՈՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՎ

06.10.2013 18:26

«Հանդիսավոր երդվում եմ ազնիվ և բարեխիղճ կատարել փաստաբանի պարտականությունները, պահպանել փաստաբանական գաղտնիքը, պաշտպանել վստահորդների իրավունքները, ազատությունները և շահերը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և փաստաբանի վարքագծի կանոնագրքով»:

Ահա այս խոսքերով հոկտեմբերի 6-ին «Փաստաբանական դպրոցի» 62 ունկնդիրներ երդվեցին Փաստաբանների պալատի խորհրդի առջև՝ դառնալով փաստաբան:

«Փաստաբանական դպրոցի» առաջին շրջանավարտների երդման և արտոնագրերի հանձնման արարողությունը սկսվեց Փաստաբանների պալատի խորհրդի նիստով, որտեղ խոհրդի բոլոր անդամները միաձայն որոշեցին ´´հավակնորդների՝ արտոնագրեր ստանալու մասին դիմումները բավարարել և հավակնորդներին տրամադրել փաստաբանական գործունեության արտոնագրեր...´´:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն' առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս փաստաբանը փաստաբանների պալատի խորհրդի առջևհանդիսավոր պայմաններում երդում է տալիս:

Արդեն փաստաբան-շրջանավարտներին ողջունեց և իր շնորհավորական խոսքն ուղղեց ՀՀ փաստաբանների պալատի նորընտիր նախագահ Արա Զոհրաբյանը. «Շնորհավորում եմ Ձեզ արտոնագիր ստանալուկապակցությամբ, դուք առողջ ուժ եք և կարծում եմ պալատը դեռ առիթներ կունենա ձեզնով հպարտանալու»:

Պալատի նախագահը հորդորեց նրանց հեռու մնալ հնարավոր բոլոր տեսակի կոռուպցիոն ռիսկերից «պետք է կոտրել հասարակության այն կարծրատիպը, որ փաստաբանը միջնորդ է դատավորի և վստահորդի միջև: Փաստաբանը միջնորդ չէ: Դուք ևս, երբեք չներգրավվեք կոռուպցիոն գործարքների մեջ և չվերածվեք միջնորդի՝ Ձեր վստահորդի և դատարանի միջև, այլապես պալատի խորհրուդը և ես կսկսենք պայքարել նման փաստաբանների դեմ,-հավելեց Արա Զոհրաբյանը:

Շնորհավորեց և իր երախտիքի խոսքն ասաց նաև

Փաստաբանական դպրոց հիմնադրամի տնօրեն Նիկոլայ Բաղդասարյանը «Ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլորին, բոլոր այն մարդկանց, ովքեր կանգնած են եղել Փաստաբանական դպրոցի հիմնադրման ակունքներում և շարունակում են աջակցել նաև այսօր, դասախոսական ողջ կազմին և ունկնդիրներին»:

Ելույթի խոսքերից հետո փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը հավակնորդներին հանձնեց փաստաբանական գործունեության արտոնագրերը:

Այնուհետև, նոր և նախկին փաստաբանները շնորհավորեցին միմյանց:

ՀՀ Փաստաբանների պալատ

Կարինե Ղումաշյան

Հաջորդ նորությունը: ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Առաջարկվող նորություններ

17.09.2013ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

29.10.2013 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

30.09.2013«ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ԱՐՎԵՍՏԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

30.09.2013ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&

parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })